


Հողային ծածկույթում մետաղների կոնցենտրացիոն բաշխվածությունը 2022 թվականի III եռամսյակում

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: 2022 թվականի 3-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Գյումրի և Վարդենիս քաղաքներում:

Գյումրի քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.4-2.4 անգամ, պղնձի պարունակությունը՝ 15.6-24.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.4-23.0 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-14.3 անգամ, նիկելի պարունակությունը՝ 8.5-18.3 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.2-1.6 և արսենի պարունակությունը՝ 2.5-5 անգամ:




Գծապատկեր 92. Մետաղների պարունակությունը Գյումրի քաղաքի հողային ծածկույթում

Վարդենիս քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.1-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 18.0-24.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.3-8.9 անգամ, քրոմի պարունակությունը՝

19.0-42.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 24.3-42.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.2-1.3 անգամ և արսենի պարունակությունը՝ 5.5-8.0 անգամ:

ք. Վարդենիս



Գծապատկեր 93. Մետաղների պարունակությունը Վարդենիս քաղաքի հողային ծածկույթում